ԹԷ ԻՆՉ ՊԱՏՄԵՑ ԹՐԷԲՕՆԷՄԸ

Սիֆիլիսի միքրոպն եմ: Անունս՝ Թրէբոնէմ: Այսպէս մկրտած են զիս գիտուն կոչուած մարդիկ, կարծեմ այն պատճառով որ մարմինս կը նմանի բարակ թելի մը, համաչափ և գեղեցիկ, որ ինք իր վրայ ոլորուած է: Շարժումներս այլաձև են, արագ և կանոնաւոր: Խցանի մը կամ գգիրի մը (պուրկու) երևոյթը ունիմ, որ շարունակ յառաջ կը մղուի, կարծես բանի մը մէջ մտնել ուզէր: Որևէ արգելք չի կրնար կանգնեցնել օձապտոյտ և նենգամիտ յառաջխաղացումս:

Շատ փոքր եմ. հազիւ 15–12 միկրոն երկայնութիւն ունիմ (1 միկրոն=1 մետրի մէկ միլիոներորդ մասը): Ոչ ոտք ունիմ և ոչ գլուխ: Մարմնիս երկու ծայրերը կը վերջանան երկար, ոլորուն և շատ բարակ թելով մը: Կը սարսափիմ օդէն և լոյսէն: Կը սիրեմ գիշերը և մութ անկիւնները:

Մարդիկ երկար ատեն փնտռեցին զիս. միշտ աննշմար անցայ: Օրին մէկը, 1905–ին էր, մանրէաբան կոչուած երկու մարդեր, Շաուտին և Հօֆման, զիս նշմարեցին իրենց սատանայական ակնոցներով: Թէև գիտուն ըսուած արարածները դիւրաւ չեն յուզուիր, սակայն այն երկուքին ուրախութիւնը չափ ու սահման չունէր: Մէկ գիշերուան մէջ ամբողջ աշխարհին տեղեկացուցին իրենց եզակի գիւտը: Տեսնելու էր թէ գիտունները ինչպէս իրար անցան ու սկսան զիս հալածել տարօրինակ ակնոցներով զորս մանրադիտակ կ՚անուանեն: Զանազան գոյներով զիս ներկեցին, լաւ կարենալ տեսնելու համար, արհեստական սնունդներ տուին աճեցնելու համար եւն.:

Կարծեցի թէ ցեղիս բնաջնջման սև ժամը հնչած է: Սակայն մխիթարուեցայ, խորհելով որ գիտունները դեռ չէին գտած ցեղս ամբողջովին և մէկ անգամէն թունաւորող և ոչնչացնող դեղ մը և հասարակ ժողովուրդի քար տգիտութիւնն ու նախապաշարումները կրնային դեռ երկար տարիներ իմ թանկագին օժանդակներս ըլլալ: Եւ իրօք, անկէ ի վեր յաջողութեամբ շարունակեցի գործունէութիւնս:

Թերևս պիտի ուզէք ծագումիս պատմութիւնը գիտնալ: Դժբախտաբար այդ կէտին լաւ ծանօթ չեմ. որովհետև ընտանեկան փաստաթուղթերս ժամանակի ընթացքին կորսուած են: Գիտունները՝ որոնք պրպտելու հիւանդութիւնը ունին, շատ մը ենթադրութիւններ ըրած են: Իբր թէ 15–րդ դարու վերջերը երևան եկած եմ Իտալիոյ մէջ, ըստ ոմանց Ֆրանսայի Կարոլոս Ը. Թագաւորին զինուորները հոն բերած են զիս, իսկ ուրիշներու համաձայն, Քրիստոփոր Քոլոմպոսի Ամերիկայէն վերադարձող զինուորներու միջոցով եկած եմ: Սակայն այդ Եւրոպա մուտքիս թուականն է: Իրականին մէջ ցեղս մարդկութեան չափ հին է: (Շարունակելի)